Արձանագրություն

գ.Փարաքար 17.01.2017թ.

2017 թ. հունվարի 17 -ին Փարաքարի գյուղի «Մշակույթ և սպորտ» ՀՈԱԿ-ի դահլիճում կայացավ Փարաքար համայնքի ղեկավարի 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվության լսումը, մասնակցությամբ ՀՀ Արմավիրի փոխմարզպետ Լ.Մուրադյանի, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքապետարանի ենթակայության հիմնարկի, ՀՈԱԿ – ների աշխատակիցների և համայնքի բնակչության ներկայացուցիչների:

Ժողովի նախագահ՝ Ս.Վարդանյան

Քարտուղար՝ Գ.Մանուկյան

Օրակարգ – Փարաքար համայնքի ղեկավար Ս.Վարդանյանի հաշվետվությունը. 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
/Հաշվետվությունը կցվում է/

Արամայիս Համբարձումյան – Փարաքարի համայնքապետարանի բարեխիղճ աշխատակիցների ջանքերի շնորհիվ հարկային եկամուտների հավաքագրումը կատարվել է 109.0 %-ով, տեղական տուրքի գծով՝ 101 %, ոչ հարկային եկամուտների գծով 112.7 %,զուտ եկամուտների գծով 108.9 %-ով: Աշխատակիցների բացատրական աշխատանքի շնորհիվ հարկատուները ժամանակին կատարում են իրենց պարտավորությունները, որը շատ գովելի է:

Վարազդատ Հակոբյան –«Փարաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրեն – Կրկին անգամ խնդրում եմ հնարավորության դեպքում ճշտել նոր դպրոցի կառուցման/ աշխատանքների սկսման ժամկետը, քանի որ մեր դպրոցը գտնվում է շատ անմխիթար վիճակում, սեյսմակայուն չէ և կառավարության որոշմամբ նախատեսվել էր կառուցել նորը: Հապաղումը լի է անկանխատեսելի հետեանքներով, քանի որ դպրոցի պատերի ճաքերը գնալով ավելի են խորանում: Ինչպես նաև խնդրում եմ կարգավորել դպրոցամերձ/ տարածքով անցնող կոյուղագծերի հարցը:

Գաբրիել Գրիգորյան - բնակիչ – Չնայած մեր բազմաթիվ խնդրանքների ոռոգման/ առուները մնում են անմխիթար վիճակում: Մի տարօրինակ վիճակագրություն կա. ամռան ամիսներին առուները դառնում են սակավաջուր, աշնան ամիսներին հորդառատ: Հարցը շատ հրատապ է, սակայն երկար տարիներ է չի լուծվում: Բազմիցս դիմել ենք համայնքի ղեկավարին, պատկան մարմիններին գրվել են գրություններ, սակայն ընթացք չկա:

Գասպար Գասպարյան – բնակիչ – Ի ուրախություն մեզ նշեմ, որ նոր տարին դիմավորեցինք լուսավորված փողոցով՝ օդանավակայանի խաչմերուկից մինչև միջնակարգ/ դպրոցի հատվածը լուծվել է գիշերային լուսավորության հարցը: Եթե հնարավորություն լինի շարունակել մինչև գյուղի վերջը շնորհակալ կլինենք:

Արամ Սարգսյան – համայնքապետարանի աշխատակից – գրվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը, որն ընդգրկում է 2017-2021 թվականները: Ծրագրում նախատեսվում է լուծել համայնքի հետևյալ հրատապ հարցերը Թաիրով գյուղի Մեքենագործների շենքերի բակի 1100 գմ նոր կոյուղագծի կառուցում, փողոցների գիշերային լուսավորության/ անցկացում, Թաիրովի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում:

Լարիսա Մուրադյան – փոխմարզպետ – գովելի է, որ համայնքում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները կատարվել են: Աշխատակազմը համախմբված կատարում է իր պարտականությունները: Փարաքար համայնքը մարզի մասշտաբով եզակի համայնքներից է, որի մասին միշտ խոսվում է գոհունակությամբ և ցանկացած բնագավառում ունի առաջընթաց: Հուսով եմ 2017 թվականին աշխատանքները կշարունակվեն ավելի կազմակերպված և բովանդակալից:

Ժողովի նախագահ՝ Ս.Վարդանյան

Քարտուղար՝ Գ.Մանուկյան